## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան, Գ. Քոչարի 21ա ☎ 54-35-02

«ԳԱԿ - ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին
ըստ ցանկի

Հարգելի մասնակից

«ԳԱԿ - ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոնի» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքը:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում **«ԿԸՀ-ՇՀԱՊՁԲ-11/1/2»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ քան 2015թ. փետրվարի 26-ը, ժամը 09$^{00}$ -ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Երանուհի Սամվելյանը:

Հայտերը կբացվեն 2015թ. փետրվարի 26-ը, ժամը 09$^{00}$ ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների բենզին ռեգուլյարի մատակարարումը:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար՝ բենզին ռեգուլյարի (որը կազմված է **2 չափաբաժնից**) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրերի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերում:

Սույն հրավերի շրջանակում կնքվելու է երկու պայմանագիր: Պայմանագրերից մեկը կնքվելու է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ բենզինի ձեռքբերման պայմանով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետ) և առավելագույն քանակներով պայմանագիր:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 4), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 4.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով՝ տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ YeranuhiS@elections.am:

Առդիր՝ 16 էջ:

Հարգանքով՝

Լ.Գրիգորյան

Կատարող՝ Ե.Սամվելյան, հեռ 56-28-57